

Պուխարայի այս զորքերը ընտիր բանուած, որոչ, հեշտութեամբ ճանչցուող զծածեւերով, գեղեցիկ կարմիր կամ գինեգոյն, այսօր իսկ մեծ յարգ ու արժէք ունին: Նա մանաւանդ անոնց «խաչը Պուխարա» տեսակը իրենց ունեցած խաչածեւ զծածեւերուն համար այդպէս կոչուած առհասարակ ամէն օտարէ:

Թուրքեստանի, Աֆղանիստանի եւ Պուխարայի հնադարեան եւ մեծագանգուած հայ գաղութներուն մասին շատ քիչ բան գիտենք այժմ, թէ եւ որեւէ տարակոյս չկայ թէ հայեր հոն գացած են առուտուրով, զինուորական գաղթականութեամբ եւ կամ բռնազաղթով, նոյնիսկ Քրիստոսէ առաջ: Անոնցմէ ինչ որ կը մնայ մշակոյթի որոչ հետքեր են, թէ եւ պերճախօս՝ սակայն ոչ մանրամասն: Ասոնցմէ մին է անտարակոյս այդ զորքերուն հայկական անուրանալի խաչը եւ անոնց որդանէն ծագած կարմրութիւնը⁽²⁹⁾:

(29) Չափազանց հին է Թուրքեստան գանուելուն փաստերը: Զինաց Վուդի ինքնակալին ժամանակ (Ք. Ա. 140-86) կը յիշուի Հայաստանի հետ դոյութիւն ունեցող յարաբերութիւն: Այս Հան տունի մեծագոյն ինքնակալին ատեն «Հոնները Արեւելեան Թուրքաստանէն զէպի հիւսիս զուրս քշուած էին կամ հպատակեցուած: Տարիմ (գետի) հունը խոնուած էր չինացի գաղթականներով, եւ կարաւանները Արեւմուտք կ'երթային մետաքսով, լայքայով եւ ճէյտով բեռցած, փոխանակելու համար Հայաստանի եւ Հոմի ոսկիին եւ արծաթին հետ. (The Outline of History. — H. G. Wells, N. Y. 1922, p. 475): Սակայն ասկէ առաջ ալ Ուրարտուի արքունի գանձերուն մէջ կը յիշուի փղօսկր գահաւորակներ եւ լայքայով ներկուած շիկափով, որոնք անտարակոյս անկէ, Թուրքեստանէն, Զինաստանէն կամ Հնդկաստանէն կը բերուէին, քանի որ Հայաստանի յատուկ արտադրութիւններ չէին: Երկրայի մեհենական աւերակներուն մէջ կատարուած պատահական պեղումներուն ընթացքին՝ անցեալ դարուն՝ գտնուած են իրեր, որոնք թէ եւ Քրիստոսէ առաջ Ե դարու գործեր կը նկատուին, սակայն յարաբերութիւն ունին Օգոստ գետահունին արուեստին հետ, եւ այդպէս ալ ցուցադրուած են:

Ստեփանոս Տարօնցի իր պատմութեան մէջ կը գրէ Սմբատ Բագրատունիի (591-638) մասին ըսելով. «Այս Սմբատ երթեալ յաշխարհն Վրկանի պատերազմաւ եւ գտեալ անդ ազգս գերեալս ի Հայոց եւ բնակեալ ի Թուրքաստան անապատին, որ Սագաստանն անուանի, մոռացեալ զլեզու եւ զգիրութիւն Հայերէն: Զոր տեսեալ Սմբատայ եւ ուրախացեալ յոյժ՝ երէց մի Հարէլ անուն վարդապետ նոցա կարգէ՝ յորմէ ուսեալ զգիրութիւն հայերէն՝ կան մինչեւ ցայսօր վիճակ սրբոյն Գրիգորի»: (Պատ. Տիեզերական, 1885, Ս. Պետերբուրգ, էջ 85-86): Ասկէ առաջ գրեթէ նոյնը կը գրէ Յովհաննէս Կաթողիկոս (Պատմութիւն, Երուսաղէմ, 1867, էջ 90): Սակայն ամէնէն առաջ կ'երեւայ թէ Սերէսս եղած է արծազանգ այս վրկայութեան, որմէ բառացի օգուտներ են Յով. Կաթողիկոս եւ Ստեփ. Տարօնցի իրենց պատմութեան համար: (Պատ. Սերէսի, Թիֆլիս, 1912, էջ 301-302): Ասիկա կարծես կը հաստատէ 1683ին Պարսկաստան զբերուած Զրանսացիի մը, Մէսիէօ Սանսոն, որ իր յուշերուն մէջ կը գրէ Սկիւթիոյ (Սագաստանի) Քրիստոնեաներու գաղութին մասին, ըսելով թէ «Պուլսնները եւ Աղուանները (Աֆղան)՝ կը բնակին լեռներուն մէջ, վրաններու տակ բնակող ժողովուրդ մ'են, նման մեր նախնեաց: Շատ պատերազմասէր են, եւ հիանալի կերպով լաւ ազեղ զօրծածել զիսեն, սակայն խոշոր աւապակներ են, եւ երբեք չեն խղճար կարաւաններուն: Կը բնակին Սկիւթիոյ մէջ, թէ եւ հպատակ են Մեծ Մուկուլին (Հընդ-կաց), սակայն ան այնքան անոնց աէրը չէ, որովհետեւ անոնք պատրաստ են ծառայելու իրենց աւելի վճարողին: Պարսկաստան գիտէ անոնց հետ հարկ եղածին պէս վարուիլ, որովհետեւ անոնց կու տայ շատ մը առանձնանորհումներ, որոնք եթէ նոյնիսկ ըստնումէ իրենց ծառայութեան տակ չի բերեր զանոնք, ամէն պարագայի տակ անոնցմէ կ'առնէ իրենց վնասելու հակումը: Անոնք իջնալի նշանը կ'ընեն եւ ծայրայեղօրէն կը սիրեն քրիստոնեաները, սակայն նոյնքան պիտանք կը զգան մահմեականներէն: Ասոնք Թուրքմանիոյ այն հայերէն են, որ կասպից ծովու շրջանի երկիրներու (հայերէն), զորս Թիմուր տարաւ Սկիւթիոյ